

ՔԱՌԱԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(Ըստ 20-րդ դարի անգլերեն-հայերեն բառարանագրության տվյալների)

Ս. ԽԱՍԱՊԵՑԱՆ

Բառակապակցական են կոչվում այն տերմինները, որոնք բաղկացած են երկու կամ ավելի ինքնուրույն բաղադրիչներից: Բառակապակցական տերմինների վերաբերյալ դեռևս միասնական կարծիք չկա: Տերմինաբաններից ոմանք բառակապակցական տերմինները դիտում են որպես ազատ բառակապակցություններ, ոմանք համարում են դարձվածաբանական միավորներ, ոմանք էլ՝ նույնացնում են միաբառ տերմինների հետ: Օրինակ, Բ. Ա. Լարինն ընդգծում է բառակապակցական տերմինների ոչ դարձվածաբանական բնույթը¹, Օ. Ս. Ախամանովան, ընդհակառակը, դրանք համարում է դարձվածաբանական միավորներ²: Ա. Ի. Օժեգովի կարծիքով բառակապակցական տերմինները կարելի է դարձվածաբանական միավորներ համարել միայն ընդհանուր լեզվի շրջանակներում, իսկ տերմինաբանական համակարգերի շրջանակներում դիտվելիս նրանք դարձվածաբանական միավորներ չեն³: Ա. կադ. Վ. Վ. Վինոգրադովը դարձվածաբանական միավորները բնեջիս այն կարծիքն է հայտնում, որ տերմին հանդիսացող բառային ամբողջական խմբերը պետք է առանձին դիտարկվեն դարձվածաբանական միավորներից⁴: Իսկ Վ. Պ. Գանիբենկոն բառակապակցական տերմինները բաժանում է երեք ենթախմբի՝ ա) ազատ բառակապակցությունների, բ) ոչ ազատ բառակապակցությունների, գ) դարձվածաբանական միավորների⁵:

Անժխտելի է, որ բառակապակցական տերմինները ընդհանրություններ ունեն ինչպես միաբառ տերմինների, այնպես էլ ազատ բառակապակցությունների ու դարձվածաբանական միավորների հետ, բայց ճիշտ չէ նրանց նույնացնել դրանցից որևէ մեկի հետ, որովհետև կան նաև տարբերություններ: Օրինակ, միաբառ տերմիններից նրանք տարբերվում են իրենց բաղադրյալ կազմությամբ, ի տարբերություն ազատ բառակապակցությունների, նրանք կայուն ու անբաժանելի կապակցություններ են և օժտված են պատրաստի տեսքով վերարտադրվելու ընդունակությամբ. ի տարբերություն դարձվածաբանական միավորների, նրանք օժտված են բնորոշիչ հատկանիշով և գործածվում են որպես անվանում:

Մեզ թվում է, որ բառակապակցությամբ արտահայտված տերմինները բառային կապակցությունների մի առանձին տարատեսակ են: Նրանք մի կողմից տարբերվում են միաբառ տերմիններից իրենց կառուցվածքով, բայց մյուս կողմից համարժեք են միաբառ տերմիններին, որովհետև նրանք կատարում են նույն գերը. ինչ միաբառ տերմինները և բառիմաստի տեսակետից անբաժանելի են, որովհետև անկախ բաղադրիչների քանակից մեկ հասկացություն են արտահայտում:

Բառակապակցական տերմինների քանակը ըստ 20-րդ դարի անգլերեն-հայերեն բառարան-

¹ Б. А. Ларин. Очерки по фразеологии, УЗ ЛГУ № 198, серия фил. наук, вып. 24, с. 210.

² О. С. Ахманова. Очерки по общей и русской лексикологии, М., 1957, с. 169.

³ С. И. Ожегов. О структуре фразеологии, ЛС, вып. 2, 1957, стр. 52.

⁴ В. В. Виноградов. Русский язык, с. 25.

⁵ В. П. Даниленко. Лексико-семантические и грамматические особенности слов терминов (сб. Исследования по русской терминологии, М., 1971, с. 8).

նագրութեան տվյալների հետևյալն է՝ 2. Չազմագլխանի անգլերեն-հայերեն բառարանը⁶ ընդգրկում է 1449, Մ. Գուլումեյանի անգլերեն-հայերեն բառարանը⁷ 237, իսկ նույն հեղինակի հայ-անգլերեն բառարանը⁸ 650 բառակապակցական տերմիններ: Այսպիսով, բառակապակցական տերմինների զուամարը երեք բառարաններում կազմում է 2336:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառակապակցական կառույցը գերիշխող է ծովային, մաթեմատիկական, ռազմական, տրամաբանական և իրավագիտական տերմինհամակարգերում: Բառակապակցական տերմիններում գործածության հաճախականությունը առաջին տեղը զբաղեցնում են ծովային տերմինները:

Բառակապակցական տերմինները կարելի է դասակարգել՝ ա) ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, բ) ըստ բաղադրիչների քանակի, գ) ըստ բաղադրիչների տերմինարանական և ոչ տերմինարանական բնույթի:

Ըստ բաղադրիչների քանակի միացության բառակապակցական տերմինները լինում են երկանդամ և եռանդամ: Հանդիպում են նաև բազմանդամ տերմիններ, որոնք շատ փոքր թիվ են կազմում: Ամենատարածվածն ու բնորոշը բառակապակցական տերմիններում երկանդամ կառույցն է: Մեր հաշվումներով, 2. Չազմագլխանի բառարանի 1449 բառակապակցական տերմիններից ընդամենը 30-ը բազմանդամ են. 120-ը՝ եռանդամ, իսկ մնացած 1299-ը՝ երկանդամ: Դա նշանակում է, որ բառակապակցական տերմիններում երկանդամ կառույցին բաժին է ընկնում 86,6 տոկոսը, իսկ եռանդամ և բազմանդամ տերմինները կազմում են ընդամենը 13,4 տոկոս:

Խազմանդամ տերմիններից կարելի է նշել՝ ա) ծովային տերմիններ. դեկը նավի ուղղությունը դարձնել, խարսխի երկու պարանների ոլորում, աստիճանաբար հովի կողմը շարժել, բ) բժշկական տերմիններ. ստամոքսի արտաքին թաղանթի բորբոքում, ուղեղի ոստայնաձև թաղանթի բորբոքում:

Չուսանդամ տերմիններից են՝ ա) ծովային. նավը առաջ քաշել, ցուկածողի ծայրի օղակ, հոսանքի ուղղությունը փնտել, բ) բժշկական. բերանի խոռոչի բորբոքում, ներքին անոթների հիվանդություն. գ) մաթեմատիկական. գտնել ընդհանուր հայտարարը, առաջին կարգի գործողություն, երկրորդ աստիճանի հավասարում:

Մրկականքամ տերմիններից են՝ ա) ծովային. նավի կեռ, ծամանակվոր կայմ, առագաստը պարզել, բ) բժշկական. ստամոքսի խոց, կարմիր ջոռ, բնական ծաղիկ, սրտի արատ, գ) երաժշտական. անգլիական փող, կեղծ կատարում, թավ ձայն, դ) էլեկտրական. կարճ միացում, բարձր լարվածություն, ուղղակի հոսանք և այլն:

Ըստ բաղադրիչների խոսքի մասային պատկանելության բառակապակցական տերմինները բաժանվում են ձևարանական հետևյալ տիպի կաղապարների.

1. գոյական-գոյական: Այս կաղապարն ունեցող բառակապակցական տերմիններից առաջին տեղն են գրավում բժշկական տերմինները, որոնցից որպես օրինակ կարելի է նշել՝ թոքերի բորբոքում, փայծաղի ուռուցք, ստամոքսի խոց, ուղեղապարկի բորբոքում և այլն:

2. ածական-գոյական: Այս կաղապարն օժտված է գործածության ամենամեծ հաճախականությամբ: Առաջին բաղադրիչը ցույց է տալիս տեսակը, երկրորդ բաղադրիչը՝ սեռը: Կաղապարը գերիշխում է մաթեմատիկական, երաժշտական, ֆիզիկային վերաբերող տերմիններում: Օրինակ. ա) մաթեմատիկական. ուսցիտնալ թիվ, անկանոն կոտորակ, բ) ֆիզիկական. կարճ ալիք, զուգահեռ միացում, բարձր հոսանք:

3. Բայ-գոյական կաղապարը հանդիպում է հիմնականում ծովային տերմիններում, որոնցից կարելի է նշել՝ իջեցնել առագաստը, լափել արագությունը, դանդաղեցնել արագությունը և այլն:

4. Գոյական-բայ կաղապարը գերիշխող է ծովային տերմինհամակարգում: Այս կաղապարով կազմված տերմիններից են՝ ա) ծովային. առագաստը պարզել, խարսխ նետել, պարանը ձգել, բ) մաթեմատիկական. աստիճան բարձրացնել, արմատը փոխել: Քարտազրված տերմինների թվում կան նաև թվական-բայ, թվական-գոյական և այլ կաղապար ունեցողներ, որոնք, սակայն, շոշափելի թիվ չեն կազմում:

Այսպիսով, բառակապակցական տերմիններում ամենատարածվածն ու կենսունակը ածական-գոյական կաղապարն է: 2. Չազմագլխանի բառարանի տվյալներով 509 բառակապակցական տերմիններ ունեն ած.-գ կաղապար, 202-ը՝ գ.-գ կաղապար: Միայն բժշկական տերմին-

⁶ Հարություն Չազմագլխան, Հնդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Բոստոն, 1922:

⁷ Մեսրոպ Գուլումեյան, Հնդարձակ բառարան անգլիերեն-հայերեն, Կահիրե, 1961:

⁸ Մեսրոպ Գուլումեյան, Հնդարձակ բառարան հայերեն-անգլիերեն, Կահիրե, 1950:

նահամակարգում է, որ գ-գ կաղապարը գերիշխում է ած.-գ կաղապարին: Մնացած տերմի- նահամակարգերում պատկերը հակառակն է՝ ած.-գ կաղապարը անհամեմատ ավելի մեծ տա- րածում ունի, քան գ-գ կաղապարը:

Ինչ վերաբերում է բաղադրիչների միջև շարահյուսական կապին, ապա պետք է ասել, որ բառակապակցական տերմիններում բաղադրիչների միջև գոյություն ունի ստորադասական կապ: Երկրորդ բաղադրիչը շարահյուսորեն գերադաս է առաջինի նկատմամբ, այսինքն երկ- րորդ բաղադրիչն է արտահայտում տերմինի հիմնական իմաստը, իսկ առաջինը նրա ար- տահայտած իմաստը լրացնում, կոնկրետացնում է: Ակադ. էդ. Աղայանը գտնում է, որ երկ- րորդ բաղադրիչը կազմում է տերմինի միջուկը, իսկ առաջինը հանդես է գալիս որպես ծա- վալիչ: Բաղադրիչները միմյանց հետ կապված են լրացում-լրացյալ կապով: Ընդ որում՝ գո- յականական գերադաս բաղադրիչ ունեցող տերմինները կարելի է բաժանել ա) որոշիչ-որոշյալ փոխհարաբերությամբ բաղադրիչներ ունեցող տերմինների և բ) հատկացուցիչ-հատկացյալ փոխհարաբերությամբ բաղադրիչներ ունեցող տերմինների: Առաջին կապի դեպքում որոշյալն արտահայտում է տերմինի հիմնական իմաստը, իսկ որոշիչը ցույց է տալիս որոշյալի որևէ հատկանիշը և կոնկրետացնում է նրա արտահայտած իմաստը: Սովորաբար նման փոխհա- րաբերություն է արտահայտում ած.-գ կաղապարը: Որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբե- րություն արտահայտող տերմիններից են, օրինակ, ա) էլեկտրական. կցորդական շարք, կարճ միացում, գալթական փաթույթ, արտաքին պարունակ, բ) քերականական. շեղոք սեռ, անդեմ ձև, սեռական հոլով, գ) ռազմական. բնաշնչող կրակ, ուժեղ հարված, զուգամեծ կրակ: Հատ- կացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերություն արտահայտող բառակապակցական տերմիններում հատկացյալն արտահայտում է տերմինի հիմնական իմաստը, իսկ հատկացու- ցիչը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն: Սովորաբար այսպիսի կապ է ար- տահայտում գ-գ կաղապարը: Հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերություն արտահայտող տերմիններից կարելի է նշել՝ ա) բժշկական. սրտի նոպա, փայծաղի ուռուցք, բ) վիրաբուժական. վերքի մշակում, ոսկրի քերիչ գ) ռազմական. հրետանու կրակ, կրակի գիծ և այլն:

Բայական գերադաս բաղադրիչով տերմիններում դարձյալ առկա է լրացում-լրացյալ կա- պը, այն տարբերությամբ, որ այս դեպքում երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս գործողու- թյուն, իսկ առաջին բաղադրիչը՝ սովորաբար այն առարկան, որին ուղղված է գործողությունը: Բայական գերադաս բաղադրիչ ունեցող տերմիններում գերակշռում են ծովային տերմինները: Այդ տերմիններից են՝ արագությունը բարձրացնել, ուղղություն վերցնել, հասարակածը անց- նել, ցամաքը քերել և այլն:

Ըստ բաղադրիչների տերմինաբանական և ոչ տերմինաբանական բնույթի բառակապակ- ցական տերմինները բաժանվում են տերմինաբանական շորս կաղապարների՝ տ-տ, տ-տ, տ-տ, տ-տ: Տերմինաբանական այս շորս կաղապարներից բառակապակցական տերմիններում ամե- նատարածվածը տ-տ կառույցն է, երբ երկու բաղադրիչներից և ոչ մեկը առանձին վերցրած տվյալ բնագավառի տերմին չէ: Այս կաղապարով է կազմված բառակապակցական տերմին- ների մեծ մասը. տ-տ կառույցն ունեն հիմնականում ծովային, իրավաբանական, մեքենաշի- նական և այլ տերմիններ: Օրինակ, ա) ծովային. մագնիսական հակակշիռ, հովարգել զուռ, բ) բժշկական՝ օտար նյութ, ստամոքսի խանգարում, գ) ռազմական՝ արգելական գոտի և այլն: Գործածության հաճախականությամբ աչքի է ընկնում նաև տ-տ կաղապարը, երբ բա- ղադրիչներից միայն երկրորդն է տվյալ բնագավառի տերմին: Այս կաղապարը գերիշխող է ռազմական, քերականական, մաթեմատիկական, տպագրական, ճարտարապետական և այլ տերմինահամակարգերում: Այս կաղապարն ունեցող տերմիններից են՝ ա) ռազմական. կեղծ կրակ, անսպասելի հարձակում, բ) քերականական՝ ներգործական սեղ, անցյալ ժամանակ, երրորդ դեմք, գ) մաթեմատիկական՝ բնական թիվ, անկանոն կոտորակ, դ) էլեկտրական՝ բարձր լարվածություն, կարճ միացում, ցածր հոսանք: Ավելի սակավ հանդիպում է տ-տ կա- ղապարը: Այս կաղապարով կազմված տերմիններից են՝ ա) բժշկական. ցերմության տատա- նում, դեղնախտի նշաններ, հիվանդության բարդացում և այլն: Բառակապակցական տերմին- ներում ամենապակաս կենսունակություն է դրսևորում տ-տ կաղապարը, որտեղ երկու բաղա- դրիչներն էլ առանձին վերցրած տվյալ բնագավառի տերմիններ են: Այդ կաղապարով են կազմվել հետևյալ տերմինները. ա) ռազմական՝ բանակի սպա, հրետանու կրակ, բ) մաթե- մատիկական՝ քառակուսի հավասարում, աստիճանի ցուցիչ, գ) ֆիզիկական՝ լարվածության միավոր, մագնիսական դաշտ:

Քառակապակցական տերմինների իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ գրեթե յուրաքանչյուր տերմինահամակարգ ունի միայն իրեն հատուկ, սովյալ տերմինահամակարգը հուշող բաղադրիչներ, որոնց շնորհիվ բառակապակցական տերմինը կարելի է վերագրել այս կամ այն տերմինահամակարգին: Օրինակ, բժշկական բառակապակցական տերմիններում առաջին բաղադրիչը մեծ մասամբ մարմնի մասի անվանում է (սիրտ, ուղեղ, թոք, լյարդ, երկամ), իսկ երկրորդ բաղադրիչը ցույց է տալիս առաջին բաղադրիչով արտահայտված օրգանի որևէ հիվանդագին վիճակ՝ սրտի նոպա, ուղեղի քաղցկեղ, սրտի արատ, թոքերի բորբոքում: Որպես առաջին բաղադրիչ հաճախ հանդիպում են նաև գույն նշող ածականներ՝ կարմիր քոս, կարմիր գնդիկներ, սպիտակ գնդիկներ, կապույտ հագ: Ամենամեծ թվով տերմինաբանական շարքեր են կազմում երկվանդություն (օր. անբուժելի, վարակիչ, երկարատև, մաշկային դարձակալ, գաղտնի ~), բորբոքում (մաշկի, երիկամների, ծիածանի, ականջի ~), նոպա (սրտի, երկամի, տենդի, ուշագնացություն ~) և ջրզողություն (որովայնի, կրծքի ~) բաղադրիչները: Վիրարուժական ենթահամակարգում ամենահաճախ հանդիպողը հատում է վիրահատություն բաղադրիչներն են, օրինակ. պարզ հատում, կեսարյան հատում, ծանր վիրահատություն, սրտի վիրահատություն, փայծաղի վիրահատություն:

Քերականական բառակապակցական տերմիններում որպես երկրորդ բաղադրիչ ամենից հաճախ հանդես են գալիս եղանակ (սահմանական, ըզձական, ստորագասական ~) և նախադասություն (անդեմ, բարդ, պարզ, միջանկյալ ~) բաղադրիչները: Գործածության հաճախականությամբ աչքի են բնկնում նաև ժամանակ (ներկա, անցյալ, բաղադրյալ ~), լեզու (քամական, սլավոնական ~) և բառ (պարզ, ածանցավոր, բարդ ~) բաղադրիչները: Ռազմական տերմինահամակարգին վերաբերող բառակապակցական տերմիններում երկրորդ բաղադրիչի դերում հիմնականում հանդես են գալիս հետևյալ բաղադրիչները՝ գունդ (առաջապահ, պաշտպանող, թուռցիկ ~), կրակ (ուղղակի, պատասխան, հակացայտ ~), ճարձակում (հանկարծակի, գիշերային, անսպասելի ~): Ավելի սակավ հանդիպում են՝ հարված, ճակատ, շարժ, փամփուշտ բաղադրիչները: Այդ նույն տերմինահամակարգում առաջին բաղադրիչի դերում հանդես են գալիս կրակ, կրակել (կրակի մեջ առնել, կրակի գիծ, կրակի մատնել, կրակել դեպի երկինք), պաշտպանություն (պաշտպանության գիծ, պաշտպանության կոմիտե), ճարտարապետական բառակապակցական տերմիններում որպես առաջին բաղադրիչ հանդես են գալիս ճակատ (ճակատի պսակ, ճակատի կեցք) և կամար (կամարի կենտրոն, կամարի դրվագ) բաղադրիչները: Որպես երկրորդ բաղադրիչ հիմնականում հանդես են գալիս հետևյալ բաղադրիչները՝ դրվագ (հորիզոնական, պարանաձև, քիվի ~), կամար (հակադարձ, ծանրաբաշխ ~), զավիթ (սյունազարդ, կողթիսյան ~):

Երկրաչափական բառակապակցական տերմիններում երկրորդ բաղադրիչի դերում հիմնականում հանդես են գալիս անկյուն (անկման, կորուսյան, սուր, ներքին, ուղիղ ~), երկրաչափություն (տարրական, համակարգային, նկարագրական ~), կետ (հատման, բազմապատիկ ~) և շառավիղ (միակողմ, երկրաչափական ~) բաղադրիչները:

Երավարձական տերմինահամակարգում երկրորդ բաղադրիչի դերում հաճախ հանդես են գալիս իրավունք (փողբակի, շահված, անդրանիկի ~), ժառանգ (ուղղակի, մերձավոր ~) բաղադրիչները, իսկ դատ բաղադրիչը լայն տարածում ունի առավելապես եռանդամ կամ բազմանդամ տերմիններում որպես հիմնական բաղադրիչ. օրինակ՝ վնասի հատուցման դատ, միայն դատավորի քննությամբ դատ: Մեկնագիտության բնագավառին վերաբերող բառակապակցական տերմիններում որպես երկրորդ բաղադրիչ ամենից հաճախ հանդիպում է մեկնա բաղադրիչը (կենտրոնախույս, ստաղդ, սպազման ~): Այն հաճախ գործածվում է նաև եռանդամ բառակապակցական տերմիններում որպես միջուկ (ածուխ փշրող մեքենա, օդը ճնշող մեքենա և այլն): Համեմատաբար հաճախ են հանդիպում նաև անիվ (հակաշիական, փոսավոր ~), լծակ (բարդ, երթևեկող ~), զլան(անամեղ ~), և այլ բաղադրիչները: Երկրաբանական տերմիններում գերիշխող դիրք են գրավում հետևյալ տերմինաբաղադրիչները՝ շրջան (սառնային, կավձային, փղային ~), խավ (ոսպնաձև, կեղծ, խոտորակի ~), դար (ածխային. կենսազուրկ ~): Կենսաբանական տերմիններում լայն գործածություն ունեն ոսկր (սեպաձև, սրունքի ~), և անոթ (հերաձև, արտաբեր ~) բաղադրիչները: Ֆիզիկային վերաբերող տերմիններում որպես առաջին բաղադրիչ հաճախ գործածվում է վճռական բաղադրիչը (վճռական ծավալ, ~ ճնշում, ~ կետ), իսկ որպես երկրորդ բաղադրիչ գերիշխող են մարտկոց (գալվանական ~, գազային ~), հոսանք (փոփոխական ~, բարձր հոսանք), ինչպես նաև օրենք (Քեպլերի ~, Ջոուլի ~) բաղադրիչները: Օրենք բաղադրիչը մեծ տարածում ունի

նակ էլեկտրական տերմիններում: Հարկ է նշել, որ քննարկվող բոլոր երեք բառարաններում թարգմանությունը զուգընթաց տրվում է նաև յուրաքանչյուր օրենքի էություն բացատրությունը: Ինչ վերաբերում է ծովային տերմինահամակարգին, որը պարունակում է ամենամեծ թվով բառակապակցական տերմինները, այստեղ գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում սլաքան (ձգել պարանը, ամրացնելու ~, ցուռկի ~), տախտակամած (զիսավոր տախտակամած, կորնթարդ ~), առագաստ (պարզել առագաստը) հիմնական բաղադրիչները:

Բառակապակցական տերմինները քննելիս մեզ հետաքրքրում էր նաև այն հարցը, թե հայերենի բառակապակցական տերմինները իրենց կառուցվածքով համընկնում են արդյոք անգլերեն տերմինների հետ: Քննությունը ցույց է տալիս, որ ոչ միշտ է, որ հայերեն և օտար տերմինները համընկնում են իրենց կառուցվածքով, այսինքն՝ անգլերենի բառակապակցական տերմինը ոչ միշտ է, որ հայերենում նույնպես բառակապակցական տերմինով է արտահայտված և հակառակը: Ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս ասելու, որ այս հարցի վերաբերյալ նկատվում են երեք կարգի օրինաչափություններ՝ ա) օտար բառակապակցական տերմինին համապատասխանում է հայերեն միաբառ տերմին: Պատահական չէ, որ թվարկումը սկսվեց այս կետով: Պետք է ասել, որ օրինակների մեծ մասը վերաբերում է այս կետին: Հայերենի հարստությունն ու ճկունությունը հնարավորություն են տալիս մի բառով արտահայտելու անգլերենի բառակապակցական տերմինը: Օրինակ՝ neuralgia of the hip and thigh—զիստաջղացավ, jail fever—ժանտաջերմ, aqua puncture—ջրախայթում, typhoid fever—ժանտատենդ, bone ache—ոսկրացավ, mud bath—տղմաբաղնիք (բժշկ.), dead line—մահազիծ (ոսղմ.), to curse by bell, book and candle—բանազրել, confession of faith—հավատամար (կրոն.), bull's eye—ցուռուկ (ճարտ.): Այս երեւոյթը նկատելի է հատկապես բժշկական տերմիններում: Բ) Երկու լեզուներում էլ բառակապակցական տերմին է, օրինակ՝ running fill—անդադար կրակ, to dress on the centre—շարվել զեպի կենտրոնը, column at full distance—հավասար հեռավորությամբ շարքեր (ոսղմ.): Այստեղ էլ զերակշռում են ոսղմական տերմինները:

գ) Անգլերեն միաբառ տերմինին համապատասխանում է հայերեն բառակապակցական տերմին, օրինակ՝ canon—խոշոր տառեր (տպ.), pyelitis—ավազանի բորբոքում (բժշկ.), arrhythmia—անկանոն զարկ (բժշկ.), supports—պահեստի ուժեր (ոսղմ.) և այլն:

С. Р. ХАСАПЕТАН — Структурно-смысловой анализ составных терминов. В настоящей статье на материале больших англо-армянского и армяно-английского словарей XX века автором исследуются составные термины или термины-словосочетания. Дается классификация составных терминов по количеству составных, по грамматическому выражению составных и по терминологичности составных. Дается также смысловой анализ составных терминов.